ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Ա-Թի-Վի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի 2022 թ. մարտի 18-ի թողարկման վերաբերյալ

Դիմող՝ Գևորգ Մկրտչյան:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2022թ. մարտի 22-ին ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը ստացել է քաղաքացի Գևորգ Մկրտչյանի բողոքը «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի 2022թ. մարտի 18-ի թողարկման կապակցությամբ:
2. Բողոքարկվող նյութի ինտերնետային հղումը՝ https://www.youtube.com/watch?v=sxX48H4ztXw&t=1738s
3. Դիմումատուն իր բողոքում մասնավորապես նշել է. *«Տվյալ հաղորդումը լուսաբանվել է առանց իմ կարծիքը հաշվի առնելու և լսված լինելու իրավունքը ապահովելու, այդ պատճառով հաղորդաշարի ժամանակ հնչել են սուտ կեղծ տեղեկություններ, արատավորվել է իմ բարի համբավը, այդ թվում նաև իմ նախագործակոչային տարիքի տղայի հիմնարար իրավունքների ոտնահարում է տեղի ունեցել…»:*
4. 2022թ. մարտի 28-ին Դիտորդ մարմինը բողոքի մասին տեղեկացրել է «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն

Մուրադյանին՝ խնդրելով վերոհիշյալ բողոքի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին։

5. 2022թ. ապրիլի 7-ին ԴՄ-ն նամակ է ուղարկել Գևորգ Մկրտչյանին, նշելով. «*ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգի համաձայն՝ Ձեր բողոքը փոխանցել էինք «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության էթիկայի կանոնագրի պահանջների կատարումը վերահսկողին՝ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանին։ Հարցն ուսումնասիրելու նպատակով պարոն Մուրադյանը մեզ խնդրել է Ձեզ փոխանցել իր կոնտակտային տվյալները՝ բողոքի հանգամանքները Ձեզ հետ քննարկելու համար։ Կարող եք գրել կամ զանգահարել իրեն*»։

6. 2022թ. ապրիլի 7-ին, ապրիլի 11-ին և մայիսի 4-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցումներ է ուղարկել «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսմանին՝ «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման 2022թ. մարտի 18-ի թողարկման վերաբերյալ բողոքի ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկացնելու խնդրանքով։

7. 2022թ. ապրիլի 11-ին Դիտորդ մարմինը ստացել է Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսմանի նամակն այն մասին, որ նույն օրը վերջինս հեռախոսով խոսել է բողոքը ներկայացրած քաղաքացու՝ Գևորգ Մկրտչյանի հետ և հրավիրել հեռուստաընկերություն՝ իր բողոքը քննարկելու համար։ Օմբուդսմանն իր նամակում նշում է, որ Գևորգ Մկրտչյանը պահանջել է, որ հեռուստաընկերությունը փոխհատուցի իր ճանապարհածախսի և այն ժամանակի համար, որ նա կծախսի այդ հանդիպման ընթացքում։ Օմբուդսմանն իր նամակում նաև տեղեկացնում է. *«Ա-Թի-Վի» ՀԸ-ն չի նախատեսում հանդիպման ծախսերի փոխհատուցում, սակայն, անկախ ամեն ինչից, վերահաստատում եմ իմ կողմից հանդիպման պատրաստակամությունը*»։

8. 2022թ. ապրիլի 11-ին ԴՄ-ն նամակ է հղել «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանին՝ նշելով, որ եթե բողոքողը չի ցանկանում գնալ կոնտակտի կամ դրա համար ներկայացնում է անընդունելի պահանջներ, ապա լրատվամիջոցի ինքնակարգավորման մարմինը կարող է պարզապես անդրադառնալ բողոքի էությանը և տալ իր գրավոր եզրակացությունը։

9. 2022թ.մայիսի 5-ին ԴՄ-ն ստացել է «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանի նամակը, որտեղ նա նշում է. «*Ապրիլի 8-ի հեռախոսազրույցի ժամանակ ես*

առաջարկեցի պարոն Մկրտչյանին հանդիպել՝ քննարկելու իր ներկայացրած բողոքը: Պարոն Մկրտչյանը հայտնեց, որ պատրաստ է հանդիպել միմիայն ճանապարհածախսի և իր ծախսած ժամանակի նյութական փոխհատուցման դիմաց: Տեղեկանալով, որ փոխհատուցում չի նախատեսվում, պարոն Մկրտչյանը անցավ սպառնալիքների և հրաժարվեց հանդիպումից: Պարոն Մկրտչյանն իր գրությամբ խնդրում է «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության արարքին տալ իրավական գնահատական»: Ես չունեմ իրավական գնահատական տալու իրավասություն»:

10. 2022թ. մայիսի 8-ին ԴՄ-ն նամակով դիմել է «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանին՝ խնդրելով պատասխանել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ հարցին. «*Դուք կարողացե՞լ եք ճշտել «Կիսաբաց պատուհաններ»-ի նկարահանող խմբից՝ արդյոք նրանք որևէ ջանք գործադրե՞լ են բողոքողի հետ կապ հաստատելու, տվյալ հաղորդմանը նրան ևս հրավիրելու և նրա կարծիքը քննարկվող թեմայի շուրջ իմանալու համար*»:

11. 2022թ. մայիսի 10-ին «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանը ԴՄ-ին պատասխանել է, որ դիտարկվող հաղորդման «*նախապատրաստական աշխատանքների ընթացքում Ծաղիկ Ամիրխանյանը, իր պատմությունը ներկայացնելիս, լրագրողին չի պատմել նախկին ամուսնու, նրանից ծնված երկու երեխաների և ամուսնալուծության պատճառների մասին: Տաղավարային նկարահանումների ժամանակ Ծաղիկի մայրը լրագրողի հետ զրույցում պատմում է նախկին փեսայի և երեխաների մասին: Հաղորդմանը մասնակցող փորձագետները, լսելով այդ մասին, մի քանի հարցեր են ուղղում մեր մասնակցին՝ պատճառներն իմանալու համար: Ու քանի որ հաղորդումը պատրաստվում էր Ծաղիկի ներկայիս խնդիրները բարձրաձայնելու նպատակով, այդ թեման ծավալուն քննարկման չի արժանացել*»: Իր նամակում մեդիա օմբուդսմանը նշում է նաև, որ «*Գևորգ Մկրտչյանը թողարկմանը մասնակցած բոլոր մասնագետներին համացանցի միջոցով նամակներ է գրում՝ ներկայացնելով իր տեսակետը: Հրավիրված մասնագետները նրան խորհուրդ են տալիս պատասխան հաղորդումով ներկայանալ և ներկայացնել իր տեսակետը եթերից, սակայն Գևորգ Մկրտչյանը հրաժարվում է: Դրանից հետո, մարտի 23-ին կամ 24 - ին, նա զանգահարել է խմբագրություն, նրան առաջարկվել է պատասխան խոսքի*

հնարավորություն «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման հաջորդ թողարկումներից մեկի ժամանակ։ Պարոն Մկրտչյանը կրկին հրաժարվել է այդ հնարավորությունից։ Վերահաստատում եմ իմ պատրաստակամությունը՝ հանդիպել Գ. Մկրտչյանին և քննարկել իրեն հուզող հարցերը։
Վերահաստատում եմ «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության և «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի պատրաստակամությունը՝ Գ. Մկրտչյանին տրամադրել պատասխանի իրավունք»։

12. 2022թ. մայիսի 11-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նախաձեռնել է Գևորգ Մկրտչյանի դիմումի քննարկումն առցանց ձևաչափով։
13. 2022թ. մայիսի 11-ի առցանց նիստին մասնակցել և իր դիրքորոշումն է ներկայացրել «Ա-Թի-Վի» ՀԸ մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանը և վերահաստատել բողոքը ներկայացրած քաղաքացու՝ Գևորգ Մկրտչյանի հետ հանդիպման և «Կիսաբաց լուսամուտներ»-ի առաջիկա թողարկումներից մեկում պատասխանի իրավունքի համար նրան համարժեք ժամանակ տրամադրելու պատրաստակամությունը։
14. 2022թ. մայիսի 17-ին ԴՄ-ն նամակով դիմել է Գևորգ Մկրտչյանին՝ խնդրելով հստակեցնել, թե ինքն ինչ նկատի ունի, երբ իր բողոքում նշել է թե «…*խնդրում եմ «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության արարքին տալ իրավական գնահատական*»։ Նույն օրը Գևորգ Մկրտչյանը նամակով պատասխանել է. «*Իրավական գնահատական՝ի նկատի ունեմ էթիկական գնահատական*»։

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը։

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական**

սկզբունքների կանոնագիր

4.1. Պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը:

4.2. Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

4.3. Առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր
նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել
հրապարակումներում:

6.3. Ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- **ողջունելով** սույն բողոքի կապակցությամբ Դիտորդ մարմնի հետ համագործակցելու և լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու՝ «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության մեդիա օմբուդսման Ռուբեն Մուրադյանի

պատրաստակամությունը,

- **ուսումնասիրելով և քննարկելով** բողոքի բովանդակությունը և «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի 2022թ. մարտի 18-ի թողարկումը, ինչպես նաև հեռուստաընկերության և դիմումատու Գևորգ Մկրտչյանի միջև առկա վեճն անմիջականորեն լուծելու փորձերի հետ կապված հանգամանքները,

արձանագրում է.

- Վեճի առարկա դարձած հաղորդման մեջ խախտված է լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության մասնակիցների կողմից ընդունված՝ Հայաստանի ԶԼՄ-ների և լրագրողների էթիկայի կանոնագրի 4.1-րդ հոդվածը։

- Հաղորդման մեջ, մասնավորապես, քննարկվել են Գևորգ Մկրտչյանի անձնական կյանքի մանրամասները՝ առանց նրա մասնակցության և իմացության։

- Ընդ որում՝ առկա չեն հանգամանքներ, որոնք կարող էին հիմնավորել այս մանրամասների քննարկումը հանրային շահի առկայության կամ դրա պաշտպանության հիմքով։ Մասնավորապես, քննարկման առարկա դարձան Գևորգ Մկրտչյանի ենթադրյալ դատապարտումը քրեական հանցագործության համար և իր նախկին ընտանիքում կատարած ապօրինությունները։

- Հաղորդման հեղինակների և մասնակիցների կողմից նշված թեմաների քննարկումն անցել է առանց Գևորգ Մկրտչյանին վարկաբեկող տեղեկատվության ստուգման փորձերի։

- Բացի անձամբ Գևորգ Մկրտչյանից, հաղորդումն անդրադարձել է վերջինիս նախազորակոչային տարիքում գտնվող ավագ որդու անձնական կյանքի նուրբ մանրամասներին (կրկին առանց նրա իմացության ու մասնակցության)։ Ընդ որում, այս մանրամասները կարող են ազդել ապագա զինծառայողի՝ ծառայակիցների հետ հարաբերությունների վրա։

- Այն, որ Գևորգ Մկրտչյանի անձնական կյանքի մանրամասների քննարկումը սպասելի չէր և անակնկալ էր «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի հեղինակների համար, չի վերացնում վերոնշյալ Կանոնագրի 4.1 հոդվածի խախտումը, քանի որ հաղորդման ընթացքում հաղորդավարի և նկարահանող խմբի անդամների կողմից փորձեր չեն արվել դադարեցնելու նկարահանումներից

բացակայողի անձնական կյանքին միջամտությունը։

- Բացի այդ, հաղորդումը հեռարձակվում էր տեսագրությամբ և կարող էր ենթարկվել անհրաժեշտ խմբագրման, որպեսզի Գևորգ Մկրտչյանի և նրա ավագ որդու անձնական կյանքի հանգամանքներն առանց նրանց իմացության հայտնի չդառնային լայն լսարանին։
- Առանձին գնահատականի է արժանի Գևորգ Մկրտչյանի նախկին կնոջ կրտսեր երեխաների թեմային անդրադառնալը, թեև Մկրտչյանի բողոքում այն չի շոշափվել։ Այս երկու անչափահասներին վերաբերող մի շարք մանրամասների հրապարակումը թույլ է տալիս նշել պատշաճ նրբանկատության բացակայության մասին, որի անհրաժեշտությունն ընդգծված է Լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության մասնակիցների կողմից ընդունված՝ Հայաստանի ԶԼՄ-ների և լրագրողների էթիկայի կանոնագրի հոդված 4.3-ում։

Միևնույն ժամանակ,

- Դիտորդ մարմինը բարձր է գնահատում հեռուստաընկերության մեղիա օմբուդսմանի ջանքերը՝ Գևորգ Մկրտչյանին հնարավորություն ընձեռելու մեկնաբանել հաղորդումը, որի ժամանակ միջամտել են նրա անձնական կյանքին՝ առանց իր իմացության։

Դիտորդ մարմինը նաև կոչ է անում Գևորգ Մկրտչյանին՝

- համագործակցել «Ա-Թի-Վի» հեռուստաընկերության հետ՝ պատասխանի իրավունքի տրամադրմամբ լուծելու համար իրենց միջև ծագած վեճը, ինչը նախատեսված է թե՛ ՀՀ օրենսդրությամբ, թե՛ ԶԼՄ-ների մասնագիտական էթիկայի համընդհանուր նորմերով, այդ թվում ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության մասնակիցների կողմից ստորագրված Հայաստանի ԶԼՄ-ների և լրագրողների էթիկայի կանոնագրի 6.2. և 6.3. հոդվածներով։

Քանի որ «Ա-Թի-Վի» հեռուստաընկերությունն ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ, Դիտորդ մարմնի առջև վերոհիշյալ Կանոնագրի 4.2 հոդվածով սահմանված պատասխանատվություն չի կրում եւ պարտավորություն չունի հրապարակելու սույն փորձագիտական կարծիքը։

Այդուհանդերձ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը բողոքի

հասցեատեր լրատվամիջոցին կոչ է անում տարածել սույն կարծիքը՝ դրանով իսկ նպաստելով պատասխանատու լրագրության սկզբունքների կիրառմանը:

Ընդունվել է 2022թ. մայիսի 11-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ,

Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ,

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ,

«Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ,

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ,

Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: